ունէի ճանապարհորդել մի մեծ քարաւանի հետ: Նա պէտք է դուրս գար երեկոյեան պահուն. ցերեկոյ տօթի պատճառով որոշել էին գնալ գիշերով:

Վարպետ Փանոսը, նրա մայրը, կինը, երեխաները հաւաքոել էին բակում մեզ ճանապարհ դնելու: Ծառաները, աղախինները եւ գործարանի աշակերտները, խումբով կանգնած, հեռոից նայում էին: Բոլորի դէմքի վրայ երեւում էր մի տեսակ տխրութիւն, կարծես Ասլանը այդ տան սիրելի անդամներից մէկը լինէր, որ գնում էր հեռու, շատ հեռու, եւ գուցէ միւս անգամ չէին տեսնի նրան: Նա ցած իջաւ սանդուղքներից, մօտեցաւ վարպետի մօրը, կնոջը, սեղմեց նրանց ձեռքը, գրկեց նրա երեխաներին եւ, բոլորին մնաք բարով ասելով, դուրս եկանք: Փողոցում սպասում էին մեզ երկու ձիաներ՝ փաշայի ընծայած ձին Ասլանի համար եւ մի բաւական լաւ ձի ինձ համար, որ բերել էին քարաւանից: Ասլանը համբուրոեցաւ վարպետ Փանոսի հետ եւ կրկին անգամ սեղմեց նրա ձեռքը: Ես նկատեցի վարպետի աչքերում արտասուքի կաթիլներ: Նստեցինք ձիաները: Բակում հաւաքոած բազմութիւնը այժմ խմբոած էր բակի դռանը:

— Մնաք բարեաւ՛, բարեկամներ, — ասաց Ասլանը:

— Բարի ճանապա՛րհ եւ յաջողութիւ՛ն — ասաց վարպետ Փանոսը:

— Բարի ճանապա՛րհ, — կրկնեցին նրա մայրը, կինը եւ փոքրիկ երեխաները:

Մենք մեծ շնորհակալութեամբ թողեցինք այն տունը, որտեղ վայելել էինք այնքան հիւրասիրութիւն, այնքան յարգանք եւ այնքան անկեղծ բարեկամական սէր:

Արեւի երեկոյեան ճառագայթները դեռ շողշողում էին մինարեթների բարձր կիսալուսինների վրայ, դեռ մօլլան «ազանէ չէր տոել, երբ քարաւանը ճանապարհ ընկաւ քաղաքի պարիսպների մօտ գտնոած «չայիր» կոչոած մարգադաշտից, ուր բանակ էր դրել նա, մինչեւ կը հաւաքոէին բոլոր ճանապարհորդները:

Այստեղ մենք վերջին անգամ հանդիպեցինք մուսուլցի թումաջի վաճառական խօջայ Թորոսին, որ, մի կողմում կանգնած, խօսում էր քարաւանի պետի հետ: Տեսնելով մեզ, նա մօտեցաւ:

— Բարո՛վ, պարոն բժշկապետ, դուք արդէն գնո՞ւմ էք, — հարցրեց նա, ձեռք տալով

— Գնում եմ, խօջայ Թորոս, — պատասխանեց Ասլանը: — Դուք այստեղ ի՞նչ էք շինում: